

12431



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«19» 11 2024 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 247 - 24

Նախաձեռնող՝

«ԱՐԵՎԱՍՈՒԼ» ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտասի Պ., / Շ / 50 / բն. 9

Գործունեությունը՝

Ճամբարակ համայնքի Աղբերք բնակավայրում
նախապեսվող արևային ֆոտոէլեկտրական կայանի
(ԱՖԷԿ) կառուցում
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 247 - 24

«19» օգոստոսի 2024թ.

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Աղբերք բնակավայրում նախատեսվող արևային ֆոտոէլեկտրական կայանի (ԱՖԷԿ) կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «ԱՐԵՎԱՍՈՂ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, նախագծային փաստաթղթեր
Տեղադրման վայրը՝ Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ համայնք, գ.Աղբերք

Ներածական մաս. «ԱՐԵՎԱՍՈՂ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից սեփականության իրավունքով պատկանող 6.8380 հա մակերեսով հողատարածքում նախատեսվում է կառուցել արևային ֆոտոէլեկտրական կայան (ԱՖԷԿ): Հողամասի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023թ. մարտի 7-ի 76-Ա որոշման համաձայն՝ ընկերությանը տրամադրվել է 5 ՄՎտ դրվածքային հզորությամբ էլեկտրաէներգիայի արտադրության ԼԷՆ№0720 լիցենզիա՝ մինչև 2045թ. գործողության ժամկետով: Գործունեության իրականացման համար հիմք է հանդիսացել Ճամբարակ համայնքի ղեկավարի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 17-ին տրված № 54-Ճ նախագծման թույլտվությունը:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ընդունված՝ 2014 թվականի հունիսի 21-ին) 14-րդ հոդվածի, 5-րդ մասի, 3)-րդ կետի գ. ենթակետի՝ վերը նշված նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ որպես «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ (արևային կայանը բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծին միանալու է 110 կՎ էլեկտրահաղորդման գծով):

Արևային կայանի տեղաբաշխման վայրի ընտրությունը պայմանավորված է տարածքի արևային ճառագայթման տվյալներով, տեղանքում առկա ենթակառուցվածքներով՝ մասնավորապես հարևանությամբ առկա բարձր լարման էլեկտրական հաղորդալարերով:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը մոտակա Աղբերք բնակավայրից գտնվում է 580մ հեռավորության վրա, իսկ Սևանա լճից՝ 1900մ: ԱՖԷԿ-ի տեղանքը գտնվում է հյուսիսային լայնության 40°31'20.75" և արևմտյան երկայնության 45°15'56.80" աշխարհագրական կոորդինատներում, ծովի մակերևույթից 2012 մ բարձրության վրա: Ռելիեֆը հարթ է, տեղ-տեղ՝ բլրակային: Աշխարհագրական դիրքը և ծովի մակարդակից ունեցած՝ 2012 մ բարձրությունը իրենց ազդեցությունն են



թողնում նաև տեղանքի ջերմաստիճանային ռեժիմի վրա: Նախագծված արևային կայանից 150-450 մ հեռավորությունների վրա տեղակայված են այլ արևային կայաններ: Գործունեության ենթակա տարածքում բացակայում են գրունտային ջրերը և քաղցրահամ ջրի աղբյուրները: Տարածքը չի առնչվում բնության, պատմամշակութային հուշարձանների հետ, 1 կմ հեռավորության վրա գտնվում է «Սևան» ԱՊ-ի տարածքը: Տարածքին մոտեցումը հնարավոր է ապահովել 350-400մ երկարությամբ գոյություն ունեցող գրունտային ճանապարհով:

Տարածքն աչքի է ընկնում տափաստանային, կարբոնատացված գորշ հողերով, որտեղ տարածված է տարախոտային բուսականությունը, երկար ժամանակ օգտագործվել է որպես արոտավայր: Արևային կայանի համար հայցվող տարածքում կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակներ չեն դիտարկվել: Հայցվող տարածքի հողերն աղտոտված չեն այլ գործունեությունների իրականացման հետևանքով:

Նախագծով նախատեսված է ԱՖԷԿ-ի կառուցման համար իրականացնել արևային կայանի մետաղական կարկասի մոնտաժում, բետոնե հիմքերի տեղադրում, արտաքին մետաղական ցանկապատի իրականացում և մետաղական կարկասի հողանցումներ: Այդ նպատակի համար իրականացվելու է փոխակերպիչ սարքերի տեղադրման, հաստատուն և փոփոխական հոսանքի մալուխների մոնտաժման աշխատանքներ: Կայանի կառուցման համար ընտրվել են «Sungrow» ընկերության կողմից արտադրվող 15 հատ՝ SG350HX տիպի ինվերտորներ՝ 350 կՎԱ հզորության: Ինվերտորները համալրված կլինեն իրարից անկախ 12 հատ առավելագույն հոսանքի հզորության կարգավորիչ բլոկներով, որոնցից յուրաքանչյուրին միացվելու է 2 հատ հաստատուն հոսանքի շղթաներ: Ինվերտորները մոնտաժվում են մետաղական կարկասի վրա:

Արևային կայանի կառուցման համար ընտրվել են 570 Վտ հզորության արևային երկկողմանի վահանակներ: Նախատեսված է տեղադրել 347 հատ 28 վահանակով մետաղական կարկասի խմբեր, որոնք ինվերտորներին միանում են հաստատուն հոսանքի մալուխներով: Մետաղական կարկասը մոնտաժվում է նոր տեղադրվող բետոնե սյունային տիպի հիմքերի վրա: Յուրաքանչյուր խմբում առկա են 10 հատ բետոնե սյունային հիմքեր: Բետոնե հիմքերի համար նախատեսվում է հորատել 0.9մ խորության Ø300մմ տրամագծով փոսորակներ՝ ընդհանուր թվով 3470 հատ: Նախատեսվում է բետոնի հիմքը գետնից բարձրացնել 250մմ: Բետոնե հիմքերի բաց մասերում նախատեսվում է իրականացնել հիդրոմեկուսացում 2 տակ շերտով:

Հաստատուն հոսանքի մալուխները պղնձյա են /որոնց կտրվածքի մակերեսը 1x6մմ² է/: Մալուխները սկիզբ առնելով վահանակների խմբերից, մոնտաժվում են մետաղական կարկասով մինչև ինվերտոր: Ինվերտորների ելքի փոփոխական հոսանքը նախատեսվում է հաղորդել 3*240 մմ² կտրվածքի մալուխներով, որոնք միանում են տրանսֆորմատորային ենթակայանին 0.8կՎ բաշխիչ կետում: Մալուխների ընտրությունն իրականացվել է ըստ հոսանքի թողունակության՝ հաշվի առնելով լարման անկման 7.5% և լարման կորստի +-5% թույլատրելի շեմը:

Ուժային մալուխների մոնտաժային ուղեգծերը դեպի ուժային 10/0.8կՎ տրանսֆորմատորային ենթակայան իրականացվում է ստորգետնյա տարբերակով՝ մալուխագծի խորությունը նախատեսված է 0.7 մ: Մալուխի համար խրամուղում նախատեսված է ավազի 100 մմ շերտ, որի վրա փռվում է մալուխը, այնուհետև կրկին ծածկվում 150մմ ավազի շերտով:

Արևային կայանի անվտանգության համար նախագծում նախատեսվում է



իրականացնել տարածքի լուսավորության և տեսանկարահանող սարքերով հսկողություն՝ 50 վտ Լեդ լուսատուներով, որոնք մոնտաժվում են մետաղական ցանկապատի վրա տեղադրվող 4 մ բարձրության մետաղական հենարանի վրա:

Համաձայն բաշխման ցանցին միացման տեխնիկական պայմանների /տրվ. 04.08.2023թ./ Ընկերությանը պատկանող 4.945 Մվտ դրվածքային հզորությամբ արևային էլեկտրակայանը Հայաստանի էլեկտրական ցանցերին միացնելու համար նախատեսվում է կառուցել 1x6300կվԱ հզորությամբ 110/10կվ լարման տրանսֆորմատորային ենթակայան: Ենթակայանի սնունդն իրականացվելու է «Կապուտակ» 110կվ օդային գծի թիվ 222 միջանկյալ հենարանից՝ ճյուղավորման սխեմայով, դեպի ԵԿ-ի 110կվ լարման մուտքային պորտալը՝ կառուցելով AC95/16 մմ² կտրվածքի 300 մ երկարությամբ օդային գիծ:

Տրանսֆորմատորային ենթակայանի չափերն են՝ 6058x2896x2438 մմ: Այն տեղադրվելու է հատուկ նախագծված բետոնե հարթակի վրա, բաղկացած կլինի 10կվ լարման մասից, տրանսֆորմատորային մասից և 0.8կվ լարման անջատիչներից: Նախագծով նախատեսված է տրանսֆորմատորային ենթակայանից յուղի արտանետման, յուղի հավաքման և կուտակման հոր: Յուղահավաքը պետք է կառուցված լինի երկաթբետոնե նյութից՝ 1^o թեքության անկյան տակ: Յուղի պահեստավորման բաքը պետք է կառուցված լինի բետոնե պատերից՝ ներսում մետաղական ցանց: Յուղի կուտակիչի հորի չափսերն են՝ 2970x2500x1200 մմ՝ ելնելով տրանսֆորմատորային յուղի ծավալից:

«Արևասուլ» արևային էլեկտրակայանի ընդհանուր հզորությունը կազմում է 4945 կվՏ: Արևային կայանի արտադրած էլեկտրաէներգիայի հաղորդաբաշխման համար նախատեսվում է կառուցել 110/10կվ լարման 6300կվԱ հզորության տրանսֆորմատորային ենթակայան և 110կվ օդային գիծ: Ենթակայանում տեղադրվում են 110/10կվ լարման 1 հատ եռաֆազ երկփաթույթ տրանսֆորմատոր: 110կվ ԲԲԱ-ն նախատեսված է բաց տիպի՝ AC-70/11 մմ² տիպի պողպատալյումինե հաղորդալարով: 110կվ ՕԳ-ի կտրվածքի ընտրությունն իրականացնելիս, հաշվի է առնվել տեղանքի կլիմայական պայմանները:

Շանթային պարպումների գերլարումներից գծերի և հենարանների պաշտպանության համար 110կվ հենարանների վերին կետով նախատեսվում է մոնտաժել C-50 ամպրոպապաշտպան ճոպան: Նախատեսվում է 110 կվ օդային գծի N1, 2, հենասյուներ հողակցել՝ հորիզոնական հողանցմամբ: Արևային կայանի հողանցումն իրականացվում է իրարից անկախ 7 հատ հողանցման կոնտուրներով:

Մետաղական ցանկապատն իրականացվելու է մետաղական խողովակների տեղադրումով: Ցանկապատի ընդհանուր երկարությունը կազմում է 1629 մ, բարձրությունը՝ 2 մ: Բետոնե հիմքերի բաց մասերում նախատեսվում է իրականացնել հիդրոմեկուսացում 2 տակ շերտով: Մետաղական խողովակների տեղադրումից հետո նախատեսվում է մոնտաժել մետաղական 3D ցանկապատը:

Արևային կայանի անվտանգության վերահսկողության համար՝ արևային կայանի հիմնական մուտքի մոտ նախատեսվում է կառուցել պահակակետ: Շենքում նախատեսվել է նաև պահեստային տարածք, զուգարան, խոհանոց, սերվերային սենյակ և օֆիսային տարածք՝ աշխատողների համար:

Կայանի տեղակայման շինարարական աշխատանքները տևելու են 5 ամիս՝ ըստ ժամանակացույցի: Շինարարական աշխատանքների ժամանակ կատարվելու են՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի, հորատանցքերի, տրանսֆորմատորի և յուղընդունիչի տեղադրման, մալուխային խրամակների կառուցման, ցանկապատի հենասյուների, մետաղացանցերի անցկացման համար նախատեսված աշխատանքներ: Հողային զանգվածն առաջանում է



տրանսֆորմատորային ենթակայանի կառուցման, ՕԳ-ի հորատանցքերի փորման արդյունքում: Հանվող հողային գրունտն ամբողջությամբ օգտագործվելու է հետլիցքի, տեղում հարթեցման, նպատակով:

Գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու, ենթակառուցվածքների փոփոխություններ չեն առաջանալու, կատարվելու են միայն հողային աշխատանքներ: Գործունեության իրականացման ընթացքում նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Շինարարական աշխատանքների համար նախատեսված մեքենաները և տեխնիկան կայանվելու են հարակից ճանապարհի եզրին, աշխատելու են հաջորդաբար՝ ըստ անհրաժեշտության: Տարածքում շինանյութերի պահեստավորում չի նախատեսվում: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա: Շինարարության համար անհրաժեշտ բետոնանյութը նախատեսված է պատրաստի վիճակում:

Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման փուլերում օգտագործվելու է ջուր՝ աշխատողների խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շտերով, ըստ պահանջի: Շինարարության փուլում ջրցանի և հողային գրունտի խոնավացման համար օգտագործվող տեխնիկական ջուրը տարածք կբերվի ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով: Աշխատողների համար նախատեսվում է հողամասի արևելյան հատվածում կառուցել սեպտիկ հոր, որի մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրային հոսքերով պայմանավորված, արևակայանի շինարարության և շահագործման ընթացքում, ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները բացակայում են:

ՇՄԱԳ շրջանակներում իրականացվել են արևային կայանի կառուցման և շահագործման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների գնահատման և վերլուծության աշխատանքներ:

Կայանի կառուցման շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու կայանի և ՕԳ-ի կառուցման շինարարական աշխատանքների հետ՝ պայմանավորված մթնոլորտային արտանետումներով /ծխազագերի տեսքով ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում/ ինչպես նաև փոշու տեսքով (հողային աշխատանքների ժամանակ): Համաձայն հաշվարկների՝ անկազմակերպ փոշու արտանետումները հավասար են 1,42 տ/շին. ժամանակահատված կամ 0,341գ/վրկ:

Շինարարության փուլում օդային ավազան արտնետումները նվազեցնելու նպատակով հաշվետվության կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Գործունեության արդյունքում առաջացող թափոնները պատկանում են վտանգավորության 3-4-րդ դասերին և ներառում են. մալուխների, հաղորդալարերի մնացորդներ, յուղոտված լաթեր, շինարարական նյութերի մնացորդներ՝ 30 մ³ ծավալով և կենցաղային թափոններ:

Թափոնների ճիշտ կառավարման և վերջիններիս ազդեցությունները շրջակա միջավայրի վրա նվազագույնի հասցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շինարարության փուլում լանդշաֆտի որոշակի փոփոխություններ կառուցման պայմանավորված հողային աշխատանքներով և տարածքում արևային փողոցների տեղադրումով, որոնք լինելու են ժամանակավոր:

Շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները



կապված են լինելու արևային կայանի, ենթակայանի և ՕԳ-ի անվտանգ շահագործման, ջրային ռեսուրսների օգտագործման, հողային ռեսուրսների հնարավոր էրոզիայի և աղտոտման, կենսաբազմազանության փոփոխությունների, ինչպես նաև թափոնների առաջացման հետ:

Արևակայանի և տրանսֆորմատորային ենթակայանի շահագործման ընթացքում հնարավոր վթարների կամ ենթակայանի վերանորոգման ժամանակ կառաջանան վտանգավոր թափոններ, որոնք կներառեն՝ հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր (3-րդ դաս՝ 54100207 02 033)՝ 0.3տ/տարի քանակով) յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4՝ 0,5մ3 քանակով), յուղերով աղտոտված ավազ (3-րդ դաս՝ 31402303 04 03 3)-12մ³), մալուխների, հաղորդալարերի մնացորդների թափոններ (ծածկագիր՝ 31602700 04 01 3)՝ 10կգ: Շրջակա միջավայրի վրա թափոնների ազդեցությունը մեղմելու նպատակով հաշվետվության կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Շինարարության ընթացքում լանշաֆտի վրա վնասակար ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում է.

- բացառել նախագծով նախատեսված տարածքից դուրս կառուցապատման այլ աշխատանքները կամ լանդշաֆտի այլ փոփոխությունները,

- պահպանել բնահողի բնական վիճակի պահպանման պահանջները, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, կանաչ տարածքների վնասման, աղտոտմանն ուղղված գործողությունները,

- գործունեության տարածքը մաքրել թափոններից, վերականգնել լանդշաֆտը,

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժել և հեռացնել տարածքից,

- կատարել գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ,

- օդային գծերի հենասյուների տեղադրման՝ 2 մ շառավղից դուրս տարածքներում և հարակից տարածքներում կատարել կանաչ ցանքս՝ խոտի տեսքով, խախտված կանաչապատ տարածքի վերականգնման նպատակով,

- արևակայանի և ենթակայանի տարածքն ամբողջությամբ ցանկապատել:

Արևային կայանի պանելների մաքրումը կկատարվի բերովի տեխնիկական ջրով՝ պայմանագրային հիմունքներով, որի համար կտեղադրվի 500լ տարողության փակ բաք:

Շահագործման փուլում ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ տրանսֆորմատորային յուղի հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է՝

- կառուցել 2 հատ յուղընդունիչներ (հոր)՝ տրանսֆորմատորներից յուղի հեռացման նպատակով, յուղընդունիչը լինելու է մետաղական՝ խճաքարի և մետաղական էլեմենտների համակցությամբ,

- հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացնել և հանձնել համապատասխան վերամշակող կազմակերպություններին,

- հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքել համապատասխան տարրաների մեջ և հանձնել մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառել ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն կտան արագ ներծծելու յուղային զանգվածը,

- յուղերով աղտոտված ավազը հանձնել մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,



- սև և գունավոր մետաղի ջարդոնը հանձնել մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:

Արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված պանելներ և այլ խոտանված մասեր, որոնք կուտակվելու են տարածքում՝ 6x3մ չափերով փակ պահեստային շենքում՝ մետաղական վագոն-տնակում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը: Արևային կայանի ներկրված պանելներն ունեն 10 տարվա օգտագործման երաշխիք, համաձայն որի շարքից դուրս եկած կամ վնասված պանելները հետ են վերադարձվելու արտադրող կազմակերպությանը՝ նորով փոխարինելու նպատակով: Մնացած ժամանակաշրջանում շարքից դուրս եկած պանելները կկուտակվեն պահեստարանում՝ մինչև դրանց արտահանման կամ Հայաստանի Հանրապետությունում դրանց վերամշակման հնարավորությունների ստեղծումը:

Արևակայանի, ենթակայանի և օդային գծի անվտանգության գոտու ապահովման համար շահագործման փուլում նախատեսվում է.

- հենարանի շուրջ՝ 2 մ շառավղով խոտի և թփուտների մաքրում,

- ՕԳ-ի անվտանգության գոտու պահպանում՝ 20 մ, ՕԳ-ին մոտենալու համար ճանապարհի ապահովում

- ՕԳ-ի ուղեգծի երկայնքով երթանցի և դրանց մերձենալու համար տնկիներից, կոճղերից, քարերից հողի շերտի մաքրում՝ 2,5 մ լայնությամբ,

- տարերային աղետների (քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում էլեկտրասնուցման, էլեկտրահաղորդակցության սարքերի անջատում և վտանգավոր տարածքից մարդկանց տարհանումը:

ՇՄԱԳ հաշվետվության Բնապահպանական կառավարման պլանում ամփոփվել է գործունեության իրականացման հետևանքով ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, նախատեսվող ազդեցությունների մեղմման միջոցառումները, իրականացնող մարմինների և գումարային գնահատումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագրի, արտակարգ իրավիճակների դեպքում միջոցառումների պատշաճ իրականացման միջոցները՝ աղյուսակային տեսքով:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու և վերահսկելու նպատակով նախատեսվել է իրականացնել մոնիթորինգ և վերջինիս իրականացման համար նախատեսվել են ծախսեր: Արևային կայանի կառուցման համար նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը ներառված են կայանի շինարարության և շահագործման ծախսերում: Նախատեսվում է բնապահպանական միջոցառումների կիրառման և մոնիթորինգի իրականացման համար տրամադրել տարեկան 200 000 դրամ:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Աղբերք բնակավայրում անցկացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: 4-րդ հանրային քննարկման ընթացքում առաջարկվեց Ընկերությանը՝ ցուցաբերելու ֆինանսական աջակցություն համայնքին և մասնակցել համայնքում նախատեսվող ծրագրերի իրականացմանը, մասնավորապես ճանապարհների վերանորոգման և Ընկերության լուսավորության բարեկարգման աշխատանքներին: Ընկերության հարցերի պատրաստակամություն հայտնեց աջակցություն ցուցաբերել բարոյացված հարցերի



իրականացմանը և համայնքի հետ փոխադարձ համաձայնությամբ ճշտել և պայմանագրով ամրագրել համայնքային խնդիրների աջակցման ուղղությունները:

Շահագործման փուլում գործունեության իրականացումը համայնքի բնակիչների համար ունենալու է դրական սոցիալ-տնտեսական ազդեցություն, բացվելու են 4-6 աշխատատեղեր՝ ընդգրկելով Աղբերք բնակավայրի բնակիչներին:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և ներքին գործերի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Գեղարքունիքի մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Վերլուծելով նախագծային փաստաթղթերի և ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության և հանրային քննարկումների արդյունքները՝ պետք է փաստել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման և մեղմացման տեսանկյունից նախատեսվել են բավարար միջոցառումներ և գործողությունների ծրագիր: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում, արևակայանի շինարարության և շահագործման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. ԱՖԷԿ-ի շինարարության և շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել նախագծային փաստաթղթերում ներկայացված տեխնոլոգիական լուծումների և ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև Աղբերք բնակավայրում Ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի՝ ներառյալ հանրային քննարկման ընթացքում բարձրացված հարցերի իրականացումը:

2. Արևակայանի /Էլեկտրական ցանցեր, ենթակայան, բաշխիչ սարքավորումներ, օդային գիծ/ կառուցման և շահագործման ընթացքում անվտանգության գոտու ապահովման համար անհրաժեշտ է առաջնորդվել 2023 թվականի ապրիլի 13-ի N363-Ն որոշման պահանջներով, Էլեկտրահաղորդման գծերի պլանային վերանորոգման և վերակառուցման աշխատանքներն իրականացնել Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան:

3. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին»:

4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ճամբարակի համայնքապետարանի հետ համաձայնեցված:



5. Շահագործման ընթացքում առաջացող վտանգավոր թափոնների (այդ թվում վտանգավոր թափոններ՝ բանեցված տրանսֆորմատորային յուղեր, յուղոտված լաթեր, յուղերով աղտոտված ավազ, վասված պանելներ և վահանակներ) կուտակումը, հեռացումը կամ տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համապատասխան համապատասխան համաձայնեցումների առկայության դեպքում, կամ լիցենզավորված կազմակերպությունների կողմից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԵՎԱՍՈՒԼ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Աղբերք բնակավայրում նախատեսվող արևային ֆոտոէլեկտրական կայանի (ԱՖԷԿ) կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

A handwritten signature in blue ink, likely belonging to the deputy director mentioned in the text.

Հերիքնազ Մկրտչյան